և ասէ ցՂայմաղ Խան. «Լալա՛յ զի՞նչ են սեաւքն այնոքիկ»։ Ասէ Ղայմաղ Խանն. «Լուեալ է իմ, թէ պատրի անմն եկեալ է յԱճամստանայ, և կամի համբուրել զոտս քոս»։ Եւ առաքեաց Ղայմաղ Խանն սուրհանդակ մի՝ զի ընդ առաջ գայցեն։ Եւ ունէր կաթուղիկոսն յաջոյ ձեռին զխաթիշարիֆն Փիլիպոս կաթուղիկոսին, և ի ձախոյ ձեռն զարքն, և համբուրեալ զձեռսքն, և լայր կսկծանօք և զառն հեծանօք։ Եւ հրամայեաց Արքայն առնուլ զթուղթն. և խոնարհեցոյց Հայրապետն զգլուխն, և ասէ. «Ուխտեալ է իմ համբուրել զոտս թագաւորին, և իմով ձեռամբ տալ ի նա զթուղթսն»։ Եւ կոչեցին զկաթուղիկոսն առ Արքայն. և ետես զնա զի լայր. ասէ. «Մի՛ լար ընտիար». և էառ զթուղթն։ Եւ կաթուղիկոսն կալեալ զոտս, և քսէր զերեսն։ Իսկ թագաւորն խոնարհեալ, և կալաւ զմօրուաց նորա, բարձրացոյց, և ասէ. «Մի՛ լար, բարա, զի զխնդիր քո կատարեցից»։ Եւ բացեալ զխաթիշարիֆն, ասէ. «Իմ է տուեալ սա, և ո՞վ է որ ընդդիմանայ սմա»։ Եւ բացեալ և արքն ընթերցեալ՝ ասէ. «Յորո՞ւմ աշխարհի է Ուչքիլիսայն»։ Ասէ Ղայմաղ Խանն. «Ի կողմն Պարսից է»։ Ասէ Արքայն. «Ընդէ՞ր ոչ երթայ առ թագաւորն Պարսից ի դատաստան»։ Ասէ Ղայմաղ Խանն. «Թշնամի սորա ի մերում կողմանց է»։ Ասէ Արքայն. «Զիա՞րդ կարիցէ առնել նա իշխանութիւն յԱշխարհին Պարսից, և-